ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/249

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մեգաօֆիս» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված 02.12.2020թ.),

Ա.Պարանյանի (լիազորագիր տրված 02.12.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.11.2020թ. թիվ 26/26-1/17551-2020 գրությամբ «Մեգաօֆիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 25.11.2020թ. թիվ Ե/40/2230-20 գրության հիման վրա 30.11.2020թ. թիվ 26/26-1/17551-2020 գրությամբ նախաձեռնել է «Մեգաօֆիս» ՍՊԸ-ին

(հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մեգաօֆիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մեգաօֆիս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 03.12.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ բազկաթոռների և չհրկիզվող պահարանների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-118/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնի մասով հրավերի տեխնիկական բնութագրով որպես պահանջ նշվել է՝ նստոցի առաջնային մասը կտորե, թիկնակը կտորե՝ ցանցավոր:

Վերը նշված Ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մեգաօֆիս» ՍՊԸ-ն:

«Մեգաօֆիս» ՍՊԸ-ն Հավելված 1.1-ով 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում որպես ապրանքի պարամետրեր նշել է՝ նստոցի առաջնային մասը կտորե, թիկնակը կտորե՝ ցանցավոր:

Այսինքն, «Մեգաօֆիս» ՍՊԸ-ն Հավելված 1.1-ով 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքի իր կողմից հաստատված տեխնիկական բնութագրով պարտավորվել է մատակարարել հետևյալ պարամետրեր ունեցող ապրանք՝ նստոցի առաջնային մասը կտորե, թիկնակը կտորե՝ ցանցավոր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.11.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 6 կետով՝ «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը. «Հավելված 1.1-ում թիվ 1 չափաբաժնում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում բացակայում է առաջարկվող ապրանքի նկարը»:

Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը՝ կցել է պահանջված նկարը:

Սակայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետով կայացվել է հետևյալ որոշումը. «Մասնակիցը սահմանված ժամկետում կատարել է շտկումը՝ ներկայացնելով նկարը: Սակայն առկա են անհամապատասխանություններ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի և նկարի միջև, մասնավորապես՝

Բնութագրով սահմանվում է նստոցի առաջնային մասը կտորե, բայց նկարով այն կաշվից է.

Բնութագրով սահմանվում է թիկնակը կտորե՝ ցանցավոր, իսկ նկարով ցանցավոր չէ:»

Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի “ա” ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների բազմաթիվ խախտումներ, մասնավորապես.

1. Նախ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սխալ հիմք է կիրառվել՝ մասնակցի հայտը մերժելու համար: Մասնավորապես, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել: Ընդ որում, վերոհիշյալ որոշմանը նախորդել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետով կայացրած հետևյալ բովանդակությամբ որոշումը. «Մասնակիցը սահմանված ժամկետում կատարել է շտկումը՝ ներկայացնելով նկարը:

Սակայն առկա են անհամապատասխանություններ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի և նկարի միջև, մասնավորապես՝

Բնութագրով սահմանվում է նստոցի առաջնային մասը կտորե, բայց նկարով այն կաշվից է.

Բնութագրով սահմանվում է թիկնակը կտորե՝ ցանցավոր, իսկ նկարով ցանցավոր չէ:»

Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Մինչդեռ՝ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Վերոհիշյալ նորմի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ աստեղ առկա չի եղել Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքը, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտը սխալ իրավական հիմքով է մերժվել, իսկ հայտը կարող էր մերժել կամ Կարգի 42-րդ կետի կամ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, չնայած ՍՊԸ-ի կարծիքով, այս իրավական հիմքերը նույնպես առկա չեն եղել:

2. Ինչպես արդեն նշել ենք, նման իրավիճակում տեսականորեն կարող էր առկա լինել հայտը մերժելու բացառապես Կարգի 42-րդ կետով կամ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքը: Իսկ այժմ ավելի մանրամասն.

Կարգի 42-րդ կետի հիմքով հայտի մերժման այս հիմքը նույնպես առկա լինել չէր կարող, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հանձնաժողովի 19.11.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետով կայացրած որոշմամբ արձանագրել է, որ մասնակիցը սահմանված ժամկետում կատարել է շտկումը՝ ներկայացնելով նկարը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հայտի մերժման այս դեպքում էլ մասնակցի հայտը մերժելու հիմքում պետք է դրվեր այն հանգամանքը, որ մասնակցի ներկայացրած հայտը (տվյալ դեպքում ներկայացված տեխնիկական բնութագիրը) չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրին: Մինչդեռ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մերժում է «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինիս ներկայացրած տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նկարին:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը նման իրավիճակներում նախատեսում է մասնակցի հայտի մերժումը

միայն այն հիմքերից մեկի առկայության դեպքում, մինչդեռ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մերժում է «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի հայտը, քանի որ ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նկարին: Սակայն, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով իմպերատիվ սահմանվում է, որ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատաս-խանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Իսկ ինչպես երևում է ներկայացված իրավիճակից՝ առկա չի եղել հակասություն հրավերի և մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի միջև, ինչը հիմք կլիներ մասնակցի հայտը մերժելու համար: Հանձնաժողովը արձանագրել է (մեր կարծիքով, ոչ իրավաչափորեն), որ առկա է հակասություն հայտով ներկայացրած տեխնիկական բնութագրի և կցված նկարի միջև, ինչը ըստ գնումների մասին ՀՀ օրենսդրության՝ հայտը մերժելու հիմք դիտարկվել չի կարող:

3. Ինչպես արդեն նշել ենք, «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմքով, որ վերջինիս ներկայացրած տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում ՍՊԸ-ի կողմից ներկայացրած նկարին: Մասնավորապես՝

-Բնութագրով սահմանվում է նստոցի առաջնային մասը կտորե, բայց նկարով այն կաշվից է.

-Բնութագրով սահմանվում է թիկնակը կտորե՝ ցանցավոր, իսկ նկարով ցանցավոր չէ:»

Այս կապակցությամբ խնդրում ենք նկատի ունենալ, որ «Մեգաօֆիս» ՍՊԸ-ն Հավելված 1.1-ով 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում որպես ապրանքի պարամետրեր նշել է՝ նստոցի առաջնային մասը կտորե, թիկնակը կտորե՝ ցանցավոր: Այսինքն, «Մեգաօֆիս» ՍՊԸ-ն Հավելված 1.1-ով՝ 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքի իր կողմից հաստատված տեխնիկական բնութագրով, պարտավորվել է մատակարարել հետևյալ պարամետրեր ունեցող ապրանք՝ նստոցի առաջնային մասը կտորե, թիկնակը կտորե՝ ցանցավոր:

Սակայն, գնահատող հանձնաժողովը ցուցաբերելով «ֆանտաստիկ ունակություններ»՝ ընդամենը ուսումնասիրելով ներկայացված նկարը, գտել է (պարզել է նկարից), որ նստոցի առաջնային մասը կտորե պետք է լինի, իսկ նկարով այն կաշվից է, բացի այդ թիկնակը պետք է լինի կտորե՝ ցանցավոր, իսկ նկարով ցանցավոր չէ: Մի կողմ թողնելով այն փաստը, որ նկարով նման հիմնավոր եզրահանգումներ անելը և դրա հիման վրա հիմնավոր հայտը մերժում կատարելը գրեթե անհնարին է, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Հավելված 1.1-ով՝ 1-ին չափաբաժնով առաջարկվող

ապրանքի իր կողմից հաստատված տեխնիկական բնութագրով, ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել հետևյալ պարամետրեր ունեցող ապրանք՝ նստոցի առաջնային մասը կտորե, թիկնակը կտորե՝ ցանցավոր: Եվ նման ենթադրություններ կարող էին հիմնավոր լինել միայն ապրանքը մատակարարելու փուլում՝ ապրանքը զննելու արդյունքում:

Գտնում ենք, որ նման բովանդակության Հավելված 1.1 ներկայացնելու պարագայում, որը ամբողջությամբ համապատասխանել է հրավերի պահանջներին, իրավաչափ չէր կարող համարվել «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի հայտի մերժումը՝ ներկայացված նկարի նկատմամբ ոչ հիմնավոր եզրահանգումներ անելու հիմքով:

4. Բողոքներ քննող անձին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ «Մեգաօֆիս» ՍՊԸ-ին չի ուղարկվել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ պատշաճ ծանուցում, այլ փոխարենը ուղարկվել է ընդամենը արձանագրություն թիվ 2-ը, որտեղ որպես անհամապատասխանություն նշված է եղել, որ բացակայում է ապրանքի նկարը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը խախտել ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և Կարգի 43-րդ կետերի պահանջները:

Վերոհիշյալի արդյունքում Ընկերության պայմանագիր կնքելու իրավունքից զրկելը իր հերթին հանգեցրել է «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք «Մեգաօֆիս» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/249 ընթացակարգի շրջանակներում 04.12.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադարված դիրքորոշումը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.11.2020թ. թիվ Ե/40/2230-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-118/20» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում 11.11.2020թ. «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ընթացակարգին մասնակցության հայտ: Հայտերի բացման և գնահատման նիստում արձանագրվել է, որ «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն: Համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի՝ մեկ աշխատանքային օրով կասեցվել է գնահատող հանձնաժողովի նիստը և մասնակցին առաջարկվել է շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է հայտում առկա անհամապատասխանությունը, մասնավորապես՝ ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի նկարը, որը սակայն չի համապատասխանել իր իսկ կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի բնութագրին»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/249 ընթացակարգի շրջանակներում 04.12.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/249 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/249 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար բազկաթոռի և չհրկիզվող պահարանի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-118/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգաօֆիս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.11.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով ներկայացված Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) թիվ 1 չափաբաժնում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում բացակայում է առաջարկվող ապրանքի նկարը:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-118/20» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով 17.11.2020թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մեգաօֆիս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը՝ ներկայացնելով նկարը: Սակայն, առկա են անհամապատասխանություններ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի և նկարի միջև, մասնավորապես՝ բնութագրով սահմանված է «… նստոցի առաջնային մասը կտորե…», բայց նկարով այն կաշվից է, ինչպես նաև բնութագրով սահմնված է «… թիկնակը կտորե՝ ցանցավոր…», իսկ նկարով ցանցավոր չէ:

6. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, որոշում է կայացրել «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի հայտը՝ թիվ 1 չափաբաժնի մասով, անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.11.2020թ. թիվ 26/26-1/17551-2020 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 25.11.2020թ. թիվ Ե/40/2230-20 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի 03.12.2020թ. դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ

ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ</u>***՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***<u>ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: <u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է,</u> ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար բազկաթոռի և չիրկիզվող պահարանի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-118/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեգաօֆիս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.11.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ ***«Մեգաօֆիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով ներկայացված Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) թիվ 1 չափաբաժնում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում բացակայում է առաջարկվող ապրանքի նկարը:***

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-118/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով 17.11.2020թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մեգաօֆիս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունը՝ ներկայացնելով նկարը: Սակայն, առկա են անհամապատասխանություններ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի և նկարի միջև, մասնավորապես՝ բնութագրով սահմանված է «… նստոցի առաջնային մասը կտորե…», բայց նկարով այն կաշվից է, ինչպես նաև բնութագրով սահմնված է «… թիկնակը կտորե՝ ցանցավոր…», իսկ նկարով ցանցավոր չէ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, որոշում է կայացրել «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի հայտը՝ թիվ 1 չափաբաժնի մասով անբավավար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Ընթացակարգի հրավերի (հետայսու նաև՝ Հրավեր) 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ***Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը*** (տեղեկությունները):

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

1) «Պիտանելիության չափորոշիչ».

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի.

2.2 իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 1.1-ի (ներկայացվում է ստորև).

(.....):

Հավելված 1.1

«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-118/20» ծածկագրով

գնանշման հարցման հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

_____-ն **«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-118/20»** ծածկագրով գնանշման հարցման

մասնակցի անվանումը

շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	**Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը**

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրություն

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, թիվ 1 չափաբաժնով նախատեսված «Բազկաթոռ» գնման առարկայի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Ապրանքի անվանում	Ապրանքի տեխնիկական բնութագիրը
Բազկաթոռ	Շարժական, 5 անիվի վրա՝ միմյանց կապակցված 5 թևանի խաչուկով, խաչուկը քրոմացված մետաղից, անիվից անիվ հեռավորությունը 610 մմ, բռնակները սև, պլաստմասսե, հենակից հատակ բարձրությունը 700-760 մմ՝ կախված նստատեղի բարձրությունից,կարգավորվող նստոցով (չափերը 55x60 սմ–ից ոչ պակաս, ընդհանուր բարձրությունը՝ կարգավորվող), փափուկ նստատեղով, նստոցի առաջնային մասը կտորե, դեպի թիկնակ հատվածը՝ կտորե, նստատեղի գույնը սև, 50 մմ–ից ոչ պակաս սպունգի հաստությամբ, թիկնակը՝ կարգավորվող, չափսերը՝ լայնությունը 500 մմ, բարձրությունը հատակից 1220-1280 մմ՝ կախված նստատեղի դիրքից, նստատեղի բարձրությունը հատակից 490-550 մմ՝ կախված նստատեղի դիրքից, թիկնակը կտորե՝ ցանցավոր ակրիլ սև գույնիմաքսիմալ ծանրաբեռնվածությունը՝ 120 կգ, ճոճման մեխանիզմը բազկաթոռը աշխատանքային դիրքում ֆիքսելու հնարավորությամբ: Տեսքը համաձայն նկարի:

Վերոգրյալի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Հրավերով սահմանված չի եղել Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրին կից առաջարկվող ապրանքի նկարը ներկայացնելու պահանջ, հետևաբար Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 17.11.2020թ. նիստի ընթացքում ***«Մեգաօֆիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում անհամապատասխանություն արձանագրելը, այն է ներկայացված Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) թիվ 1 չափաբաժնում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում բացակայում է առաջարկվող ապրանքի նկարը, և ներկայացված հայտը շտկման տալը՝ առաջարկվող ապրանքի նկարը պահանջելով, իրավաչափ չէ:***

Միևնույն ժամանակ, անդրադառնալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելու իրավական հիմքին, ինչը և ըստ էության հիմք է հանդիսացել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը նախաձեռնելու համար, սույն մասով հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով***

ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսինքն՝ եթե Ընկերության հայտը գնահատվել է անբավարար, ապա այն ենթակա է մերժման՝ համաձայն Կարգի 42-րդ կետի, ***մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, այն է՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի (...), որոշում է կայացրել «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի հայտը՝ թիվ 1 չափաբաժնի մասով, անբավավար գնահատելու և մերժելու վերաբերյալ:***

Այսպիսով՝ ելնելով վերոգրյալից՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուն Ընթացակարգի շրջանակներում գործել է ոչ իրավաչափ. մասնավորապես՝ Ընկերությանը ներկայացրել է Հրավերով չսահմանված՝ առաջարկվող ապրանքի նկար ներկայացնելու պահանջ, այնուհետև, հիմքում դնելով Հրավերի պահանջների խախտմամբ ձեռք բերված առաջարկվող ապրանքի նկարը, մերժել է Ընկերության հայտը՝ ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, այն է՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը (...), մինչդեռ նման դեպքում անբավարար գնահատված հայտը ենթակա է մերժման Կարգի 42-րդ կետով, այսինքն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտը մերժել է սխալ հիմքով, ղեկավարվելով Կարգի այն կետով, որը վերաբերելի չէ գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանը վերագրված խախտմանը:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Մեգաօֆիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.11.2020թ. թիվ 26/26-1/17551-2020 գրությամբ «Մեգաօֆիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**